

ԱՆՀԱՊԱՂ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Փետրվարի 28, 2022

Կապ.

Legal Aid Foundation of Los Angeles, Sara Williams, sjwilliams@lafila.org

Advancing Justice - Asian Law Caucus, Lande Watson, landew@advancingjustice-alc.org

California Rural Legal Assistance, Inc., Marisa Lundin, Բնիկների ծրագրի իրավական հարցերով տնօրեն, mlundin@crla.org

Ակտիվիստները համաձայնության են հասնում Կալիֆորնիայի Զբաղվածության զարգացման վարչության հետ լեզվական հասանելիությունն ընդլայնելու ուղղությամբ

*Լեզվական հասանելիության բարելավման՝ մինչև 2024 թ. իրականացվելիք ծրագրերն EDD-ին
հնարավորություն են տալիս պաշտպանել կալիֆորնիացիների քաղաքացիական իրավունքներն
ու ներառական շրջանակ ստեղծել համայնքների լեզվական հարուստ կարողությունների
համար*

ՍԱԿՐԱՄԵՆՏՈՒ — Շնորհիվ կալիֆորնիացիների և լեզվական իրավունքների համար պայքարող
ակտիվիստների հաղթանակի, բնակիչները, որոնց համար անզլերենը հաղորդակցության
առաջնային լեզուն չէ, այժմ ավելի լայն հասանելիություն կունենան Կալիֆորնիայի
Զբաղվածության զարգացման վարչության (Employment Development Department, EDD)
գործազրկության ապահովագրության (այսուհետ՝ ԳԱ (անզլերեն՝ UI)) ծրագրին, որով
կենսական կարևորության նպաստներ են նախատեսվում նահանգի աշխատավորության
համար: Legal Aid Foundation of Los Angeles-ը (LAFILA), Asian Americans Advancing Justice – Asian
Law Caucus-ը (ALC), California Rural Legal Assistance, Inc.-ը (CRLA), Center for Workers’ Rights-ը
(CWR) և Legal Aid at Work-ը (LAAW) կարգավորման են հասել EDD-ի հետ, որով ապահովվում է
գործակալության ԳԱ նպաստների, ծառայությունների և ռեսուրսների առկայությունը բոլոր այն
լեզուներով, որոնցով խոսում է Կալիֆորնիայի բնակչությունը:

Համաձայնության ակունքում LAFILA-ի կողմից Արդար զբաղվածության և բնակարանային
ապահովության վարչությունը (Department of Fair Employment and Housing, DFEH) ժամանակին
ներկայացված մի [բողոք](#) էր, որտեղ ներկայացվել էին ազգային ծագման, էթնիկական ինքնության
և լեզվական առանձնահատկությունների հիմքով խտրականության դեմ դաշնային և
նահանգային պահանջների համակարգային խախտումների ենթադրյալ դեպքեր՝ լեզվական
հասանելիության ոլորտում: Որպես գործընկեր իրավական կազմակերպություններ, ALC-ը,
CRLA-ը, CWR-ն և LAAW-ն միացել էին բողոքին, և DFEH-ն այդ հարցով միջնորդություն էր

ներկայացրել: Որպես կարգավորման մաս, կողմերի միջև համաձայնությունը ներկայացվել էր Սակրամենտոյի Գերագույն դատարան: Chinese for Affirmative Action-ը միացել էր իբրև այն ներկայացնող կողմ:

«Մենք ողջունում ենք EDD-ի ցանկությունը՝ սեփական գործընթացները Կալիֆորնիայի ողջ աշխատավորությանն ավելի արդար կերպով մատչելի դարձնել, անկախ նրանց գործաձած լեզուներից», ասում է **LAFILA-ի Լեզվական արդարության հարցերով հատուկ իրավախորհրդատու Ջոանն Լին (Joann Lee)**: «Այս կարգավորումն ավելի է բարձրացնում մեր նահանգի մշակութային և համայնքային բազմազանությամբ պայմանավորված կարիքների նկատմամբ EDD-ի պատասխանատվությունը: EDD-ն այս հարցում միակը չէր, քանի որ զանազան նահանգային և տեղական կառավարման մարմինների լեզվական հասանելիության պրակտիկան չէր համապատասխանում պահանջվող չափանիշներին: Որպես նահանգ, Կալիֆորնիան կարող է և պետք է անի ավելին»:

Կալիֆորնիան լեզվական բազմազանության տեսակետից երկրի առավել աջքի ընկնող նահանգներից է: Բնակչության գրեթե կեսը խոսում է ոչ անգլերեն, և 7 միլիոն անձի համար առաջնային խոսակցական լեզուն 200 այլ լեզուներից մեկն է: Մինչ իսպաներենն ամենատարածվածն է՝ մոտ 64%, անգլերենի սահմանափակ իմացություն ունեցող մոտ 2.4 միլիոն անձ խոսում է մեկ այլ լեզվով, քան իսպաներենը:

Համաճարակի ընթացքում կենսական կարևորության ԳԱ նպաստներից օգտվել փորձած հայցվորները մի շարք արգելքների և ծոչընդոտների էին հանդիպել. եղել էր պահ, երբ նրանց սոսկ փոքր տոկոսն էր կարողացել խոսել ներկայացուցչի հետ՝ ընդամին աշխատելով հացի փող վաստակել և սեփական ընտանիքը փրկել կործանումից: Նահանգում առավել տարածված լեզուներից որևէ մեկով չխոսող անձինք, որոնց մի կերպ հաջողվել էր կապ հաստատել, անկարող էին եղել հաղորդակցվել EDD-ի հետ, որովհետև զանգահարողների գեռակշռող մասին լեզվական ծառայություններ չէին տրամադրվել: Իրենց հայցերը ներկայացնելու համար շատերը ստիպված էին եղել օգտվել իրենց ծառայությունների դիմաց գիշատիչ վճար սահմանող երրորդ կողմի միջնորդների կամ նոտարական գրասենյակների ծառայություններից, և նույնիսկ այդ պարագայում չէին կարողացել վերջնականապես կողմնորոշվել գործընթացում և ստանալ իրենց հասանելիք նպաստները: Նահանգապետի [EDD Գործատուի թիմի 2020 թ. սեպտեմբերի գեկույցը](#) պարզել էր, որ «օժանդակության դիմելիս անգլերենին վարժ չտիրապետող անձինք անհաղթահարելի արգելքների են հանդիպել»:

Քերն քաունթիի բնակիչ, CRLA-ի հաճախորդ Գրեգորիո Սանչեսը (Gregorio Sanchez) նկարագրում է այդ արգելքներից մի քանիսը. «Ես խոսում եմ միքսթեքո լեզվով և EDD-ի ներքո իմ ԳԱ նպաստներից օգտվելիս բազմաթիվ խնդիրների եմ առնչվում ... Ես չգիտեմ՝ ինչպես օգտվել սմարթ հեռախոսից կամ համակարգչից, ուստի ամեն անգամ նպաստի նոր հայց ներկայացնելիս դիմում եմ մեկ այլ անձի օգնության, և ամեն անգամ օգնություն հայցելիս այդ անձն ինձնից գումար է գանձում»:

«Լեզվական հասանելիությունը ոչ միայն իրավական և բարոյական պահանջ է, այլև զեղծարարությունը կանխարգելող միջոց», ասում է **CRLA-ի Բնիկների ծրագրի իրավական հարցերով տնօրեն Մարիսա Լունդինը (Marisa Lundin)**: «Հուսով ենք որ այս կարգավորման կարևոր հետևանքներից մեկը կլինի այն, որ պրն. Սանչեսի պես մարդիկ, որոնք չեն խոսում երկրում լայն տարածված որևէ լեզվով, անմիջական հասանելիություն կստանան EDD-ին՝ առանց գաղտնի անձնական ֆինանսական և ինքնության փաստաթղթերը բացահայտելու շահույթ կորցրող, անազնիվ միջնորդներին, կամ գործազրկության նպաստներից օգտվելու համար սեփական գրպանից վճարելու՝ չունենալով որևէ երաշխիք, որ օրինական հայցերը ճշգրիտ կերպով կամ հաջողությամբ կներկայացվեն»:

«Անզլերենի սահմանափակ իմացությամբ շատերի համար, EDD-ում լեզվական ծառայությունների սակավությունն անհաղթահարելի արգելք է եղել իրենց ընտանիքների համար անհրաժեշտ նպաստները ստանալու ճանապարհին: Հայցվորների հետ խոսելիս՝ վերջինիս նախընտրած լեզվով իրական ժամանակում թարգմանչական ծառայություններ տրամադրելու՝ EDD-ի հանձնառությունն իրական ու արագ ազդեցություն կունենա համայնքի անդամների կյանքում: Հեռախոսակապի և թարգմանչական ռեսուրսների ընդլայնումը ասիական, միջինարևելյան և այլ լեզուներով թույլ կտա հաղթահարել այն արգելքները, որոնք բազմաթիվ ընտանիքների նեղության պատճառ են դարձել՝ խոչընդոտելով նրանց համաճարակի ընթացքում և դրան նախորդած ժամանակահատվածում օգնություն ստանալ», ասում է **Advancing Justice - Asian Law Caucus-ի ավագ իրավախորհրդատու Ուիննի Քաուն (Winnie Kao)**:

«ԳԱ ծրագրի վերաբերյալ այս կարգավորումը ճիշտ ուղղությամբ կատարված կարևոր քայլ է», ասում է **LAAW-ի Աշխատանքի ու ընտանիքի հարցերով ծրագրի աշխատակազմի իրավաբան Քեթրին Ուաթչիթը (Katherine Wutchiett)**: «Զուգահեռ փոփոխություններ են անհրաժեշտ EDD-ի Վճարովի ընտանեկան արձակուրդի և Հաշմանդամության ապահովագրման նահանգային ծրագրերում ևս, որոնք ամբողջովին վճարվում են մեր բազմաբնույթ աշխատուժի կողմից, և մեր համայնքի անդամները պետք է կարողանան անարգել օգտվել այս նպաստներից»:

Անցյալ տարի համայնքի անդամներն ու ակտիվիստները հաջողությամբ կարողացան առաջ մղել ԳԱ ծրագրի լեզվական հասանելիությունը բարելավելու ուղղությամբ մի շարք օրենսդրական փոփոխություններ, այդ թվում՝ EDD-ի բազմալեզու ծառայություններն ամրապնդելու նպատակով [երկու տարվա ընթացքում \\$21 միլիոնի հատկացումը](#): Օրենսդրությամբ նաև պահանջվում է, որ մինչև 2022 թ. հուլիսի 1-ն EDD-ն օրենսդրի բյուջետային և քաղաքականության կոմիտեներին զեկուցի վճարովի ընտանեկան արձակուրդի և հաշմանդամությունից ապահովագրման նահանգային ծրագրերի ներքո տրամադրվող բազմալեզու ծառայությունների ընթացքի մասին: Կարգավորման պայմանները, որոնք ամրապնդում են օրենսդրական վերջին նախաձեռնությունը, հետևյալն են.

- Որակյալ թարգմանիչների կամ բազմալեզու աշխատակիցների օգնությամբ իրական ժամանակում բանավոր և ժեստային լեզվական ծառայություններ տրամադրել ԳԱ-ի

հայցվորներին՝ կոնկրետ հայցվորին անհրաժեշտ *ցանկացած* լեզվով: Եթե, անկախ բոլոր ջանքերից, այդ լեզվական ծառայություններն անհնար է տրամադրել, ապա EDD-ն պետք է հայցված թարգմանչի միջոցով հայցվորին հետ զանգահարի հինգ աշխատանքային օրվա ընթացքում (սահմանափակ բացառություններով):

- Մինչև 2022 թ. վերջն ընդլայնել կոնկրետ լեզուներով նախատեսված ԳԱ հեռախոսագծերը՝ ներառելով կալիֆորնիացիների շրջանում առավել տարածված անգլերենից բացի այլ յոթ լեզուները: Ներկայիս, առանձին հեռախոսագիծ է հատկացված իսպաներեն, չինարեն, կանտոներեն և վիետնամերեն լեզուներին: Կարգավորումը պահանջում է ավելացնել նաև կորեերենը, թագալոգը և հայերենը:
- Մինչև 2022 թ. վերջը թարգմանել հայցվորների համար կենսական կարևորություն ունեցող բոլոր ԳԱ փաստաթղթերը կալիֆորնիացիների շրջանում առավել տարածված անգլերենից բացի 15 լեզուներով՝ օգտվելով որակյալ թարգմանիչների ոչ թե մեքենայի ծառայություններից: Այդ լեզուները կներառեն վերը նշվածը, ինչպես նաև արաբերենը, պարսկերենը, փենջաբին, ռուսերենը, ճապոներենը, հինդին, քմերը (կամբոջերեն) և թայլը:
- Մինչև 2024 թվականը, բարելավել առցանց հասանելիությունը առավել տարածված անգլերենից բացի յոթ լեզուների մուտքի պորտալների և առցանց ԳԱ-ի օգնությամբ:

«Այս կարգավորման ակնհայտ առանձնահատկություններից մեկն այն է, որ EDD-ից պահանջվում է տվյալներ հավաքել այն մասին, թե ԳԱ-ին հասանելիություն ստանալու նպատակով Կալիֆորնիայի աշխատավորությունն ինչպես է օգտվում լեզվական օժանդակ ծառայություններից, և այդ տվյալները կանոնավոր կերպով տրամադրել լեզվական իրավունքների ակտիվիստներին», ասում է **Center for Workers' Rights-ի Գործադիր տնօրեն Դանիելա Ուրբանը (Daniela Urban)**: «EDD-ի հետ մենք ակնկալում ենք շարունակական համագործակցություն, որպեսզի այս կարգավորմամբ առաջ բերված փոփոխությունները դրական ազդեցություն ունենան Կալիֆորնիայի բնակչության կյանքում»:

[Ընթերցե՛ք կարգավորման ամբողջական տեքստը՝ ներառյալ բոլոր օրենսդրական նախաձեռնությունները:](#)

###

[Legal Aid Foundation of Los Angeles-ի մասին](#)

Legal Aid Foundation of Los Angeles-ը (LAFLA) ոչ-շահութաբեր իրավաբանական ընկերություն է, որի նպատակն է՝ հետամուտ լինել Մեծ Լոս Անջելեսի տարածքում աղքատության մեջ ապրող բնակիչների համար հավասար արդարության պրակտիկային: Անմիջական ներկայացուցչության, համակարգային փոփոխությունների և համայնքային իրավատիրության միջոցով LAFLA-ն կյանքեր է փոխում: Այն հինգ գրասենյակ ունի Լոս Անջելես կոմսությունում, ինչպես նաև Բնքնօգնության չորս իրավաբանական կենտրոն՝ շրջակայքի դատարանային համալիրներում և բացի այդ՝ ընտանեկան բռնության երեք կլինիկա, որոնց խնդիրն է՝ օգնություն տրամադրել տուժողներին:

[California Rural Legal Assistance, Inc.-ի մասին](#)

California Rural Legal Assistance, Inc.-ը (CRLA) անվճար իրավաբանական ծառայություններ և կրթություն է տրամադրում Կալիֆորնիայի գյուղական շրջանների ցածր եկամուտ ունեցող տասնյակ հազարավոր բնակիչների իրականացնելով նաև դատավարական գործունեություն, ինչն էլ ավելի մեծաթիվ բնակչության շահերի է ծառայում: Մենք մեր հաճախորդներին օգնում ենք իրենց բարեխիղճ աշխատանքի համար համարժեք վճար ստանալ, գտնել և ապրել ապահով բնակարանային պայմաններում, օգտվել առողջական խնամքի ծառայություններից, իրենց երեխաների համար ապահովել որակյալ կրթություն, և ավելին: Կալիֆորնիայի գյուղական շրջանների համար մեր տեսլականն է, որ բոլոր անձինք արժանանան արժանապատիվ և հարգալիք վերաբերմունքի, և որ հարգվեն և երաշխավորվեն նրանց հիմնարար իրավունքները: Այցելե՛ք մեզ առցանց. www.crla.org:

[Center for Workers' Rights-ի մասին](#)

Center for Workers' Rights-ը Սակրամենտոյում գործող ոչ-շահութաբեր իրավաբանական և փաստաբանական կազմակերպություն է, որի առաքելությունն է՝ ստեղծել համայնք, որտեղ աշխատավորներին կվերաբերվեն հարգանքով, արժանապատվությամբ և արդարացիորեն: Այդ տեսլականն իրականություն դարձնելու համար մենք իրավաբանական ծառայություններ ենք տրամադրում ցածր վարձատրվող աշխատավորներին, աջակցում ենք աշխատավորների իրավունքների պաշտպանությանն ուղղված նախաձեռնություններին, և խթանում ենք աշխատողների կրթությունը, ակտիվությունը և առաջնորդությունը Սակրամենտոյի մեծ տարածքում:

[Asian Americans Advancing Justice - Asian Law Caucus-ի մասին](#)

Asian Law Caucus-ը (ALC) հիմնադրվել է 1972 թվականին, որպես երկրի առաջին իրավական և քաղաքացիական իրավունքների կազմակերպություն, որը կենտրոնանում է ցածր եկամուտ ունեցող ներգաղթյալների և ասիացի ամերիկացիների և խաղաղօվկիանոսյան կղզիների բնակիչների կարիքների վրա: Գիտակցելով Միացյալ Նահանգներում դեռևս գոյություն ունեցող սոցիալական, տնտեսական, քաղաքական ու ռասայական անհավասարությունը՝ ALC-ն հանձնառու է մեր հանրության բոլոր խավերի համար հավասարության և արդարության առաջ մղմանը:

[Legal Aid at Work-ի մասին](#)

Legal Aid at Work-ն իրավաբանական ծառայություններ տրամադրող ոչ-շահութաբեր կազմակերպություն է, որն աջակցում է ցածր եկամուտ ունեցող աշխատավոր ընտանիքներին անվճար իրավաբանական գրասենյակների և թեժ գծերի, հանրային կապի և կրթության, ուղիղ ծառայությունների և դատավարությունների և քաղաքականության շահերի պաշտպանության միջոցով: